Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2026թվականի ապրիլի 06-ին, ժամը 14:30-ին «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմ համայնքային կառավարչական հիմնարկ»-ում՝ Ալավերդու համայնքապետարանի վարչական շենքում (հասցե՝ քաղաք Ալավերդի, Զորավար Անդրանիկ փողոց, 8/1, 4-րդ հարկ, նիստերի դահլիճ) տեղի կունենա համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդ – վաճառք՝ 1 լոտով:

Վաճառվում են՝

Լոտ 1. Համայնք Ալավերդի, Հաղպատ գյուղի վարչական տարածքում գտնվող, համայնքի կադաստրային քարտեզի 06-060-0210-0043 ծածկագրով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող հողատեսքի 0.02725 հեկտար մակերեսով հողամասը 600 000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ մեկնարկային գնով՝ գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով:

Աճուրդի մասնակցության վճարը սահմանված է 15000 դրամ, նախավճարի չափը մեկնարկային գնի 50 տոկոսի չափով, աճուրդի քայլի չափը՝ մեկնարկային գնի 5%:

Հողամասերի նկատմամբ սահմանափակումներ չկան:

Հողամասերի հարևանությամբ գոյություն ունեն ընդհանուր օգտագործման մոտեցման ճանապարհ:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչև 2026թ. մարտի 31-ը, ժամը 17:00-ն, հայտերի ընդունման հասցեն է՝ ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկ փողոց, 8/1, 4-րդ հարկ, 410 սենյակ:

Աճուրդի պայմանների մանրամասներին՝ հողամասի ելակետային տվյալներին, հողամասի հատակագծին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Ալավերդու համայնքապետարան, (ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկ 8/1, հեռ.՝ /0253/2-41-00):

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ